Պրոլետարներ բոլոր յերկիրների, միացե՛ք

796 ռ

ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ
(ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԻ) ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՅԻ

ԴԻՄՈՒՄԸ

ԲՈԼՈՐ ԸՆՏՐՈՂՆԵՐԻՆ, ԲԱՆՎՈՐՆԵՐԻՆ,
ԲԱՆՎՈՐՈՒՀԻՆԵՐԻՆ, ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻՆ ՅԵՎ
ԳԵՂՋԿՈՒՀԻՆԵՐԻՆ, ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻՆ,
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՆՏԵԼԻԳԵՆՑԻԱՅԻՆ

Ա 1/9135

ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՑՈՒՂԱՄԵՆՏԱԼ ՏՐՈՍՏԱՐԱՆ

ՀԱՅԿՈՒՍՀՐԱՏ 1937 ԵՐԵՎԱՆ

Գլավլիտի լիազոր № Ի—2054, հրատ. № 518
պատվեր № 232, տիրաժ 30·000
Հայկուսհրատի տպարան.
Երևան, Ալավերդյան № 71

Ընկերնե՛ր.

1937 թվի դեկտեմբերի 12-ին Խորհրդային Միության աշխատավորները մեր սոցիալիստական Սահմանադրության հիման վրա ընտրելու յեն ԽՍՀ Միության Գերագույն Խորհրդի պատգամավորներ:

Բոլշևիկների կուսակցությունն ընտրություններին հանդես է գալիս բլոկ կազմած, դաշինք կնքած անկուսակցական բանվորների, գյուղացիների, ծառայողների, ինտելիգենցիայի հետ: Ընտրական ոկրուգներում ցուցակագրված՝ Գերագույն Խորհրդի պատգամավորության—ինչպես կոմունիստ, այնպես և անկուսակցական—թեկնածուներն առաջադրված են բանվորների ու ծառայողների ընդհանուր ժողովների կողմից՝ ըստ գործարանների, կարմիր-բանակայինների ժողովների կողմից՝ ըստ զորամասերի, կոլտնտեսականների ու մենատնտեսների ժողովների կողմից՝ ըստ գյուղերի, կոմունիստների ու անկուսակցականների ընտրական դաշինքի հիման վրա: Այդ թեկնածությունները միահամուռ կերպով պաշտպանեցին աշխատավորների բազմաթիվ միտինգներն ըստ ընտրական ոկրուգների ու տեղամասերի:

Բոլշևիկների կուսակցությունը չի անջրպետվում անկուսակցականներից, այլ, ընդհակառակը, դեպի ընտրություններն և գնում անկուսակցականների հետ բլոկ կազմած, դաշինք կնքած, գնում է բանվորների ու ծառայողների պրոֆեսիոնալ միությունների հետ, կոմյերիտմիության և անկուսակցականների մյուս կազմակերպությունների ու ընկերությունների հետ բլոկ կազմած:

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

Հետևապես, պատգամավորության թեկնածուները կլինեն ընդհանուր՝ ինչպես կոմունիստների, այնպես և անկուսակցականների համար, ամեն մի անկուսակցական պատգամավոր պատգամավոր է լինելու նաև կոմունիստների կողմից, ճիշտ այնպես, ինչպես ամեն մի կոմունիստական պատգամավոր լինելու յե պատգամավոր անկուսակցականների կողմից:

Բոլշևիկների կուսակցությունը կոչ է անում բոլոր կոմունիստներին ու համակրողներին համերաշխ կերպով, մեկ մարդու պես ձայն տալ ինչպես կուսակցական, այնպես և անկուսակցական թեկնածուների ոգտին:

Բոլշևիկների կուսակցությունը վստահ է, որ անկուսակցական ընտրողները նույնպես համերաշխորեն ձայն կտան կոմունիստ թեկնածուների ոգտին, ինչպես անկուսակցական թեկնածուների ոգտին:

Ընտրողները հիմք ունեն արդյոք քվեարկելու բոլշևիկյան կուսակցության թեկնածուների ոգտին:

Բոլշևիկների կուսակցությունն արժանի՞ յե արդյոք ժողովրդի այն վստահությանը, որը նա նկատի ունի առաջիկա ընտրություններում:

Ի՞նչ եր մեր Հայրենիքն առաջ և ի՞նչ դարձավ նա խորհրդային իշխանության տարիների ընթացքում, բոլշևիկյան կուսակցության ղեկավարության որոք:

Ի՞նչ եր մեր Հայրենիքը կալվածատերերի ու կապիտալիստների տիրապետության որոք և ինչի՞ հասավ նա բանվորների ու գյուղացիների իշխանության որոք, բոլշևիկյան կուսակցության ղեկավարության որոք:

Խորհրդային իշխանության տարիների ընթացքում մեր յերկրի կերպարանքը փոխվեց արմատապես: Հե-

տատնացության ու միջնադարյանության, խավարի և անկուլտուրականության, աղքատության, աշխատավորների իրավազրկության ու ճնշման յերկրից, ինչպիսին եր հին Ռուսաստանը, մեր յերկիրը վերածվեց առաջավոր, կուլտուրական, հզոր սոցիալիստական տերության:

Այդ հաջողություններին մեր ժողովուրդը հասավ բոլշևիկների կուսակցության ղեկավարությամբ:

Ով ձգտում է այն բանին, վոր մեր Հայրենիքն այսուհետև էլ լինի հզոր, կուլտուրական ու ազատ սոցիալիստական տերություն, նա ձայն կտա բոլշևիկների կուսակցության ոգտին, նա ձայն կտա կոմունիստների և անկուսակցականների բլոկի թեկնածուների ոգտին:

Մեր յերկրում ընդմիշտ լիկվիդացիայի յեն յենթարկված տնտեսության կապիտալիստական սիստեմն ու շահագործող դասակարգերը, վերացված և արտադրության գործիքների ու միջոցների մասնավոր սեփականությունը և վոչնչացված է մարդու շահագործումը մարդու կողմից: Վորպես մեր խորհրդային հասարակության անխախտ հիմք՝ հաստատված է արտադրության գործիքների ու միջոցների սոցիալիստական սեփականությունը:

Մեր ժողովուրդն այս համաշխարհային-պատմական հաղթությունը ձեռք բերեց բոլշևիկների կուսակցության ղեկավարությամբ:

Ով ձգտում է այն բանին, վոր Խորհրդային Միության աշխատավորներն ընդմիշտ ազատ լինեն շահագործման լծից, նա ձայն կտա բոլշևիկների կուսակցության ոգտին, նա ձայն կտա կոմունիստների ու անկուսակցականների բլոկի թեկնածուների ոգտին:

Սոցիալիզմի հաղթանակը ԽՍՀՄ-ում ապահովեց արդյունաբերության ծաղկումը: Ցերկու հնգամյակների տարիների ընթացքում ստեղծված է առաջնակարգ արդյունաբերություն, վոր հագեցված է ժամանակակից տեխնիկայով: Մեր սոցիալիստական ֆաբրիկաների ու գործարանների արտադրության ծավալը գերազանցում է նախապատերազմյան ժամանակվա արդյունաբերության արտադրության ծավալից ավելի քան ութն անգամ:

Մեր ժողովուրդն այս հաջողությունները ձեռք բերեց բոլշևիկյան կուսակցության ղեկավարությամբ:

Ով ճգտում է այն բանին, վոր մեր ինդուստրիան առաջիկայում ևս զարգանա, առաջ անցնելով կապիտալիստական յերկիրներից, նա ճայն կտա բոլշևիկների կուսակցության ոգտին, նա ճայն կտա կոմունիստների և անկուսակցականների բլոկի թեկնածուների ոգտին:

Մեր յերկրի գյուղատնտեսության մեջ ավելի քան յերկու տասնյակ միլիոն մանր ու մանրագույն անհատական գյուղացիական տնտեսությունների փոխարեն, վորոնք ունեցին թույլ տեխնիկա և յենթարկված եյին կալվածատիրոջ և կուլակի ճնշման, աճել և ամրապնդվել են կալվածատերերից ու կուլակներից ազատ խոշոր սոցիալիստական տնտեսություններ—ավելի քան 243 հազար կոլտնտեսություններ, վորոնց առատորեն մատակարարվել են տրակտորներ, կոմբայններ ու ժամանակակից գյուղատնտեսական այլ մեքենաներ: Մեր կոլտնտեսային գյուղատնտեսությունը խորհտնտեսությունների հետ միասին, յեթե նկատի ունենանք նրա բոլոր ճյուղերը, այժմ արտադրում է յերկու անգամ ավելի մթերքներ, քան նախապատերազմյան ժամանակվա գյուղատնտեսությունը:

Մեր ժողովուրդն այս հաղթանակները ձեռք բերեց բոլշևիկների կուսակցության ղեկավարությամբ։

Ով ձգտում է այն բանին, որ մեր կոլտնտեսություններն ու խորհտնտեսություններն առաջիկայում ևս ծաղկեն, մեր յերկրին տալով գյուղատնտեսական մթերքների լիառատություն, նա ձայն կտա բոլշևիկների կուսակցության ոգուին, նա ձայն կտա կոմունիստների և անկուսակցականների բլոկի թեկնածուների ոգուին։

Սոցիալիզմի հաղթանակը ԽՍՀՄ-ում ապահովեց աշխատավորների դրության արմատական բարելավումը։ Ցարական Ռուսաստանում միշտ յեղել է գործազուրկների հսկայական մասսա, ինչպես որ այն կա յուրաքանչյուր կապիտալիստական պետության մեջ նաև այժմ։ Նյութական անապահովությունը, անվստահությունը վաղվա որի նկատմամբ, աղքատությունը բանվոր դասակարգի մշտական բաժինն եյին։ Խորհուրդների իշխանության որոք ընդմիշտ վոչնչացված է գործազրկությունը։ Աշխատել ցանկացող խորհրդային քաղաքացու առջև վաղվա որի նկատմամբ անվստահության հարց յերբեք չի ծառանա։ Մեր յերկրի բոլոր քաղաքացիների համար որենքով ապահովված է աշխատանքի, հանգստի, ծերության ժամանակ նյութական ապահովության իրավունքը։

Մեր ժողովուրդն այս հաջողությունները ձեռք բերեց բոլշևիկյան կուսակցության ղեկավարությամբ։

Ով ձգտում է այն բանին, որ մեր յերկրի աշխատավորներն առաջիկայում ևս ազատ լինեն ամեն տեսակ գործազրկությունից և վաղվա որի նկատմամբ անվստահությունից, ով ցանկանում է բանվորների ու ծառայողների նյութական-կենցաղային դրության հե-

ծառայողների նյութական-կենցաղային դրության հետագա բարելավում, նա ձայն կտա բոլշևիկների կուսակցության ոգին, նա ձայն կտա կոմունիստների և անկուսակցականների բլոկի թեկնածուների ոգին:

Ի՞նչ եր գյուղացին կալվածատերերի ու կապիտալիստների իշխանության որոք: Նա ամենաընչաղուրկ, ամենաիրավազուրկ մարդն եր: Նախահեղափոխական գյուղում կար ավելի քան 40 միլիոն չքավոր բնակչություն՝ մարդիկ, վորոնց բաժինն եր սովն ու աղքատությունը: Խորհրդային կարգերը, վոր լիկվիդացիայի յենթարկեցին կալվածատերերին, վոչընչացրին կուլակային ստրկությունը, գյուղացիներին հանձնեցին ավելի քան 150 միլիոն հեկտար կալվածատիրական ու կուլակային հողեր և ապահովեցին կոլտնտեսային կարգերի հաղթանակը, ընդմիշտ ազատեցին գյուղացիությունը չքավորությունից ու աղքատությունից և ապահովեցին նրա համար ունևոր ու կուլտուրական կյանքի հնարավորությունը:

Մեր ժողովուրդն այս նվաճումները ձեռք բերեց բոլշևիկյան կուսակցության ղեկավարությամբ:

Ով ձգտում է այն բանին, վոր մեր գյուղացիությունն ընդմիշտ ապահովված լինի աղքատության ու սովի վտանգից, ով ուզում է գյուղի ունևոր կյանքի հետագա վերելք, նա ձայն կտա բոլշևիկների կուսակցության ոգին, նա ձայն կտա կոմունիստների և անկուսակցականների բլոկի թեկնածուների ոգին:

Ցարական Ռուսաստանը խավար եր ու ոգետ: Բնակչության ճնշող մեծամասնությունն անգրագետ եր: Իսկ Խորհրդային յերկրում արդեն իրականացված և ընդհանուր պարտադիր ուսումը—մեր դպրոցներում սովորում է 30 միլիոն յերեխա: Կրթության իրավուն-

քը բոլոր քաղաքացիների համար նվաճված և դրի է առնված մեր Սահմանադրության մեջ։ Բնակչության գրագիտությունը յերկրում 90 տոկոսից ավելի է։ Շուտով յերկրում չի լինի վոչ մի անգրագետ քաղաքացի։ Գիտությունը, գրականությունը, թատրոնը, արվեստը մեր յերկրում այնպես են զարգանում, ինչպես յերբե՛ք։ Գիտության և արվեստի նվաճումները բոլոր քաղաքացիների սեփականությունն են հանդիսանում։

Մեր ժողովուրդն այս հաջողությունները ձեռք բերեց բոլշևիկների կուսակցության ղեկավարությամբ։

Ով ձգտում է մեր յերկրում լուսավորության հետագա աճման, ով ցանկանում է Խորհրդային Միության ժողովուրդների գիտության, գրականության և արվեստի հետագա ծաղկում, նա ձայն կտա բոլշևիկների կուսակցության ոգտին, նա ձայն կտա կոմունիստների և անկուսակցականների բլոկի թեկնածուների ոգտին։

Կինը ստրուկ եր ցարական Ռուսաստանում և ստրուկ է մնում բոլոր կապիտալիստական յերկիրներում։ Միայն ԽՍՀՄ-ումն է նա ազատ ու լիիրավ։ Ինչպես քաղաքում, այնպես և գյուղում կինը դնում է տղամարդու հետ ձեռք-ձեռքի տված՝ սոցիալիզմի կառուցման և պետության կառավարման գործում։ Ապահովված ու յերջանիկ մայրության համար պայմաններ ստեղծված են միայն մեր յերկրում։ Խորհրդային օրենքները պաշտպանում են մոր իրավունքներն ու մանուկների առողջությունը։

Մեր ժողովուրդն այս հաջողությունները ձեռք բերեց բոլշևիկների կուսակցության ղեկավարությամբ։

Ով ձգտում է այն բանին, վոր մեր Խորհրդային

լինեն առաջիկայում ևս ազատ ու լիովին լինի տնտեսության ու կառավարման բոլոր բնագավառներում, նա ձայն կտա բոլշևիկների կուսակցության օգտին, նա ձայն կտա կոմունիստների և անկուսակցականների բլոկի թեկնածուների օգտին:

Ցարական Ռուսաստանը ժողովուրդների բանտը, ազգային ճնշման ու կոտորածի յերկիրը, ճիշտ այնպես, ինչպես վոր բոլոր կապիտալիստական յերկիրները հանդիսանում են ազգային ճնշման ու դաղութային ստրկացման յերկիրներ: Անցյալում ճնշված ժողովուրդները միայն Խորհրդային Միության մեջ ձեռք բերին լիակատար ազատագրում ազգային ճնշումից ու անիրավահավասարությունից: Ներկայումս Խորհրդային Միության մեջ ԽՍՀՄ-ի ժողովուրդները միավորված են միասնական Միութենական սեփականության մեջ՝ հավասարության ու կամավորության սկզբունքներով: Խորհրդային Միությունն աշխարհում միակ յերկիրն է, վորտեղ վերջնականապես վերացված է փոխադարձ անվստահությունը ժողովուրդների միջև, և վորտեղ ժողովուրդների հարաբերությունները կառուցվում են փոխադարձ վստահության, յեղբայրական միության ու բարեկամական համագործակցության սկզբունքներով:

Այս համաշխարհային-պատմական հաղթանակը մեր Հայրենիքը ձեռք բերեց բոլշևիկների կուսակցության ղեկավարությամբ:

Ով ձգտում է այն բանին, վոր Խորհրդային Միության ժողովուրդներն առաջիկայում ևս ազատ ու իրավահավասար լինեն, ով ձգտում է ԽՍՀՄ-ի ժողովուրդների բարեկամության հետագա ամրապնդման, նա ձայն կտա բոլշևիկների կուսակցության

ոգուին, նա ձայն կտա կոմունիստների ու անկուսակցականների բլոկի թեկնածուների ոգուին:

Մեր Հայրենիքի նվաճումները նոր ազատ կյանքի կառուցման բնագավառում խսկապես մեծ են: Դրանք ԽՍՀՄ-ի ժողովուրդների կողմից նվաճվել են ներքին ու արտաքին թշնամիների դեմ մղված պայքարում՝ բոլշևիկյան կուսակցության ղեկավարությամբ: ԽՍՀՄ-ի ժողովուրդների բարեկամներն ուրախ են այդ նվաճումների համար և վողջունում են դրանք: Բայց Խորհրդային Միությունն ունի վո՛չ միայն բարեկամներ. նա ունի նաև թշնամիներ: Այդ, նախ՝ լիկվիդացիայի յենթարկված չահագործող դասակարգերի մնացորդներն են յերկրի ներսում: Այդ, յերկրորդ՝ կապիտալիստական յերկիրների ռեակցիոն-ֆաշիստական ուժերն են Խորհրդային Միության սահմաններից դուրս: Յեթե ներքին թշնամիները փոքրաթիվ են ու անզոր, ապա նրանց աջակցող արտաքին թշնամիները մեր Հայրենիքի ազատության ու անկախության համար լուրջ վտանգ են ներկայացնում: Մեր Հայրենիքն այդ վտանգից ապահովելու համար հարկավոր է ունենալ, նախ՝ լավ կազմակերպված պատժիչ որգաններ, վորոնք ընդունակ լինեն անվնաս դարձնելու լրտեսներին, վնասարարներին, դիվերսանտներին և խորհրդային ժողովրդի մյուս թշնամիներին. հարկավոր է ունենալ, յերկրորդ՝ լավ կազմակերպված ու տեխնիկապես սպառազինված Կարմիր Բանակ, վորն ընդունակ լինի խորհրդային սահմանները պաշտպանելու արտաքին հարձակումից. հարկավոր է ունենալ, վերջապես՝ լավ մտածված ու հետևողականորեն կիրառվող խաղաղության քաղաքականություն, վորն ընդունակ լինի

կապիտալիստական յերկիրների ռազմատենչ շրջանների հափշտակողական քաղաքականությունը։ Մի շարք տարիների ընթացքում խորհրդային իշխանությունը կարողացավ ձեռք բերել այն, վոր մեր Հայրենիքն այժմ իր տրամադրության տակ ունի ինչպես ստուգված պատժիչ որգաններ ու լավ սպառազինված Կարմիր Բանակ, այնպես եվ հետևողականորեն կիրառվող խաղաղության քաղաքականություն՝ արտաքին հարաբերությունների բնագավառում։ Միայն այս նվաճումների առկայությամբ է բացատրվում այն փաստը, վոր խորհրդային ժողովուրդն ահա արդեն 16 տարի յե, ինչ ազատված է ռազմական ընդհարումներից, վայելում է խաղաղ կյանքի բարիքները եվ հնարավորություն ունի շարունակելու իր խաղաղ աշխատանքը։

ԽՍՀՄ-ի ժողովուրդները մեր Հայրենիքի ազատության ու անկախության պաշտպանության բնագավառում այս հաջողությունները նվաճել են բոլշևիկյան կուսակցության ղեկավարությամբ։

Ով ճգտում է այն բանին, վոր ԽՍՀՄ-ի աշխատավորներն առաջիկայում ևս վայելեն խաղաղ աշխատանքի բարիքները, ով ցանկանում է մեր Հայրենիքի ազատությունն ու անկախությունը, նա ձայն կտա բոլշևիկների կուսակցության ոգտին, նա ձայն կտա կոմունիստների եվ անկուսակցականների բլոկի թեկնածուների ոգտին։

Սրանք են մեր Հայրենիքի նվաճումները հեղափոխության տարիների ընթացքում, վորոնք ձեռք են բերված բոլշևիկների կուսակցության ղեկավարությամբ։

Սրանք են բոլշևիկների կուսակցության գործերն

ու պայքարի արդյունքները, կուսակցություն, վորի խոսքը յերբեք չի տարբերվել գործից, և վորի խոստումները յերբեք դատարկ հնչյունի չեն վերածվել:

Ահա՛ թե ինչու բոլշևիկների կուսակցությունն իրեն թույլ է տալիս առաջիկա ընտրություններում հավատացած լինել ժողովրդի վստահության նկատմամբ:

Ահա՛ թե ինչու բոլշևիկների կուսակցությունն իրավունք ունի հուսալու, վոր ընտրողները միահամուռ կերպով ձայն կտան կոմունիստների և անկուսակցականների բլոկի թեկնածուների ոգտին:

Ընկեր ընտրողնե՛ր.

Ընտրական կամպանիայի ընթացքում յերևան յեկավ կոմունիստներից և անկուսակցականներից վոմանց ձգտումը՝ ձայն տալու անպայման և միայն լիդերների ոգտին, կուսակցության ու կառավարության ղեկավարների ոգտին, անկախ այն բանից, թե նրանք վո՛ր ընտրական okրուգումն են ցուցակագրված: Այդ ընկերներն, ըստ յերևույթին, չեն հասկանում, վոր որենքի համաձայն ամեն մի թեկնածու կարող է քվեարկվել միայն մեկ ընտրական okրուգում: Այդ ընկերներն, ըստ յերևույթին, չեն հասկանում, վոր բոլշևիկների կուսակցության և անկուսակցականների պաշտպանությունը գտած այս կամ այն թեկնածուի ոգտին քվեարկելը նշանակում է քվեարկել վոչ միայն տվյալ թեկնածուի ոգտին, այլ, նախ և առաջ, քվեարկել այն քաղաքականության ոգտին, վոր վարում է բոլշևիկների կուսակցությունն անկուսակցականների հետ միասին, և վորը պարտավորվում է իրականացնել տվյալ թեկնածուն: Խնդիրը կայանում է նրանում, վոր թեկնածուները լինեն կա-

յուն ու ժողովրդի գործին նվիրված մարդիկ և վոր ընտրողները համերաշխ կերպով ձայն տան բոլոր թեկնածուների ոգտին, յեթե նույնիսկ նրանցից վոմանք ներկայումս իրենց յերիտասարդության պատճառով ընդհանուրի կողմից ճանաչված ղեկավարներ չեն հանդիսանում: Խորհրդային կարգերի առանձնահատկությունն ել հենց այն է, վոր նա ապահովում է մարդկանց, նրանց ընդունակությունների, նրանց տաղանդների արագ աճումը, վոր յերեկ դեռ քիչ հայտնի մարդիկ կարող են կարճ ժամանակամիջոցում դառնալ ընդհանուրի հարգանքին արժանի հանրածանոթ գործիչներ:

Համամիութենական Կոմունիստական (բոլշևիկների) Կուսակցության Կենտրոնական Կոմիտեն կոչ է անում բոլոր կոմունիստներին ու համակրողներին՝ ձայն տալ անկուսակցական թեկնածուների ոգտին նույնպիսի միահամուռությամբ, ինչպես նրանք պետք է ձայն տան կոմունիստ թեկնածուների ոգտին:

Համամիութենական Կոմունիստական (բոլշևիկների) Կուսակցության Կենտրոնական Կոմիտեն կոչ է անում բոլոր անկուսակցական ընտրողներին՝ ձայն տալ կոմունիստ թեկնածուների ոգտին նույնպիսի միահամուռությամբ, ինչպես նրանք ձայն են տալիս անկուսակցական թեկնածուների ոգտին:

Համամիութենական Կոմունիստական (բոլշևիկների) Կուսակցության Կենտրոնական Կոմիտեն կոչ է անում բոլոր ընտրողներին, վոր 1937 թվի դեկտեմբերի 12-ին բոլորը մեկ մարդու պես ներկայանան քվեատուփերի մոտ՝ Միության Խորհրդի և Ազգությունների Խորհրդի պատգամավորներ ընտրելու համար:

Պետք է լինի վոչ մի ընտրող, վորը չողտագործել Խորհրդային պետության գերագույն որգանի պատգամավոր ընտրելու իր պատվավոր իրավունքը:

Պետք է լինի վոչ մի ակտիվ քաղաքացի, վորն իր քաղաքացիական պարտքը չհամարի աջակցել առանց բացառության բոլոր ընտրողների մասնակցությանը՝ Գերագույն Խորհրդի ընտրություններին:

1937 թվի դեկտեմբերի 12-ի որը պետք է դառնա Լենինի—Ստալինի հաղթական դրոշի շուրջը ԽՍՀՄ-ի բոլոր ժողովուրդների աշխատավորների միասնության մեծ տոնի որ:

ԲՈԼՈ՛ՐԸ ԴԵՊԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝

Թող կեցցե՛ ու ամրապնդվի մեր հզոր Հայրենիքը՝ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը:

Կեցցե՛ մեր խորհրդային սոցիալիստական Սահմանադրությունը:

Կեցցե՛ բանվորների և գյուղացիների դաշինքը:

Կեցցե՛ կոմունիստների և անկուսակցականների դաշինքը խորհրդային պետության գերագույն որգանի առաջիկա ընտրություններում:

Կեցցե՛ խորհրդային իշխանությունը:

Կեցցե՛ Համամիութենական Կոմունիստական (բոլշևիկների) Կուսակցությունը:

ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ
(ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԻ) ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

6 դեկտեմբերի 1937 թ.

ՀԱՅ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ

[054.]
542
А 9135

ОБРАЩЕНИЕ

ЦЕНТРАЛЬНОГО КОМИТЕТА ВСЕСОЮЗНОЙ КОММУНИСТИЧЕСКОЙ ПАРТИИ (БОЛЬШЕВИКОВ)

Ко всем избирателям, рабочим, работницам, крестьянам и крестьянкам, к Кра к советской интеллигенции.

Армпартиздат, Ереван, 1937 г.